ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 սեպտեմբերի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

121
(3330)

100 դրամ

Քաղաքացիական պայմանագիր

Q. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՎԵՏ ԿՈՆՋՈՐՅԱՆԻ ՇՈՒՐՋ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում Ավետ Կոնջորյանի շուրջ ստեղծված պատմությունը նոր փուլ է մտնում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ վարչությանը դիմել են նաեւ այն անձինք, որոնք կոնֆլիկտ են ունեցել Կոնջորյանի հետ, եւ որոնց անունները շրջանառվել են նրա ծեծի գործի շրջանակում:

Խնդիրն այն է, որ պատմության մյուս կողմում եւս կա գործող ՔՊ-ական:

Խոսքը Աբովյան համայնքի ավագանու ՔՊ խմբակցության անդամ Նաիրի Հակոբյանի մասին է: Հենց Հակոբյանն է իրավապահների կողմից որպես մեղադրյալ ներգրավված Ավետ Կոնջորյանի ծեծի գործով: Հակոբյանն ու Կոնջորյանը նախկինում ընկերներ են եղել, ավելին՝ Հակոբյանն էր Կոնջորյանին ծանոթացրել «Միլոն Մայնինգ»-ի սեփականատեր Բաբկեն Հովակիմյանի հետ:

Հուլիսի 27-ին տեղի ունեցած միջադեպից հետո մամուլում, մասնավորապես, շրջանառվել են Բաբկեն Հովակիմյանի, նրա ընտանեկան վարորդ Ռոբերտ Սարգսյանի, Նաիրի Հակոբյանի, «Էլլարի Սաքո» մականունով անձի, Գրիշա Գրիգորյանի եւ Ազատ Շահոյանի անունները:

Սակայն այս անուններից ՔՊ-ական եւ ավագանու անդամ լինելու կարգավիճակը հրապարակված վստահելի աղբյուրներով հստակ հաստատվում է հենց Նաիրի Հակոբյանի դեպքում: Մյուսների դեպքում նման պնդում անելու բավարար հիմք այս պահին չկա:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հայաստանի անկախության 35-ամյակի առիթով բարձրագույն դիվանագիտական աստիճան է շնորհվել նաեւ ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բադալյանին: ՀՀ նախագահի սեպտեմբերի 16-ի հրամանագրով Անի Միշայի Բադալյանին շնորհվել է «արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարար» դիվանագիտական աստիճան: Նույն աստիճանը ստացել են նաեւ ԱԳ նախարարի խորհրդական Հայկ Դարբինյանն ու ԱԳՆ եվրոպական ինտեգրման վարչության պետի պաշտոնակատար Լենա Թերզիկյանը, իսկ Նելլի Սարոյանը՝ավելի բարձր՝ «արտակարգ եւ լիազոր դեսպան» աստիճան: Այսպիսով՝ հանրությանը հիմնականում որպես ԱԳՆ խոսնակ հայտնի Բադալյանը ստացել է օրենքով բարձրագույնների շարքին դասվող դիվանագիտական աստիճան: Հենց այս հանգամանքն էլ, ըստ «Ժողովուրդ»-ի իշխանական աղբյուրների, ԱԳՆ-ում քննարկումների առիթ է դարձել: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ վերջին շրջանում Բադալյանի դերակատարությունը նախարարությունում զգալիորեն ընդլայնվել է. նա ոչ միայն պաշտոնական խոսնակն է, այլեւ արտաքին քաղաքականության տարբեր հարցերում առանցքային դերակատարում ունի: Տարբեր ուղղություններով հարցերի ու տեղեկատվության ճշտումների դեպքում աշխատակիցներին հաճախ ուղղորդում են հենց Բադալյանի միջոցով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Էկոնոմիկայի նախարարությունում ենթադրյալ կոռուպցիոն չարաշահումների գործով դատաքննությունը հակակոռուպցիոն դատարանում կասեցվել է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ գործը նախագահող դատավոր Մերի Մոսինյանը մեկնել է դեկրետային արձակուրդ, ինչի պատճառով որոշում է կայացվել դատական քննությունը կասեցնել մինչեւ հունվար: Այսպիսով՝ աղմկահարույց գործի քննությունը մի քանի ամսով փաստացի սառեցվել է: Հիշեցնենք՝ Էկոնոմիկայի նախարարությունում կոռուպցիոն չարաշահումների գործով 2023 թվականի հունվարի 31-ին բերման էր ենթարկվել 7 անձ, այդ թվում՝ պաշտոնակ արված փոխնախարար Անի Իսպիրյանը եւ ԱԺ նախկին նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը: Սիմոնյանի հարսը հայտնվեց մեղադրյալի կարգավիճակում, սակայն կարճ ժամանակ անց նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվեց՝ գործուն զղջալու հիմքով: Այսինքն՝ մեղքը խոստովանեց, զղջաց եւ ազատվեց կալանքից, ապա՝ պատժի կրումից: Այս գործի համատեքստում Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը փետրվարի 14-ին հրաժարական տվեց, իսկ հաջորդ օրը նրան մեղադրանք առաջադրվեց՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար: Փետրվարի 16-ին հակակոռուպցիոն դատարանը նախկին նախարարի նկատմամբ երկու ամսով տնային կալանք կիրառեց: Ավելի ուշ Քերոբյանն ազատ արձակվեց: Գործով մեղադրյալի աթոռին է նաեւ «Սիներջի» ընկերության հիմնադիր Աշոտ Հովհաննիսյանը՝ հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրը: Այսպիսով՝ Էկոնոմիկայի նախարարության աղմկահարույց կոռուպցիոն գործով դատաքննությունն առայժմ կանգ է առել. մինչեւ հունվար գործը դատարանում սպասելու է դատավորի վերադարձին:



Ամիսներ առաջ Նիկոլ Փաշինյանը հանձնարարեց կառավարությանն ու Երեւանի քաղաքապետարանին, որպեսզի քայլեր ձեռնարկեն մայրաքաղաքում երթեւեկությունը կարգի բերելու ուղղությամբ: Սակայն Փաշինյանի խոսքից հետո ոչինչ չփոխվեց, ավելին՝ նույնիսկ հիմա Երեւանի փողոցներում ակնհայտ հնամաշության մեքենաների թվի պակաս կարծես թե չկա: Այս մեքենաները երթեւեկում են առանց խոչընդոտի, քանի որ վստահաբար ՏԿԵ նախարարության կողմից լիցենզավորվող ընկերություններից մեկից ստացել են տեխզննման կտրոն: Ավելին՝ նման մեքենաները հաճախ անսարքության պատճառով մնում են մայրաքաղաքի փողոցներում՝ դրանով լրացուցիչ ծանրաբեռնվածություն հաղորդելով առանց այն էլ վատ վիճակում գտնվող երթեւեկությանը: Նման մեքենաներ կարելի է տեսնել ամենուր՝ թե՛ Երեւանի ծայրամասերում, թե՛ փոքր կենտրոնում: Մեր թղթակիցն օրեր առաջ Նորքի երկրորդ զանգվածում ականատես էր եղել իրավիճակի, երբ վարորդի կողմից դիմապակին վնասված վիճակում մեքենան դուրս էր եկել երթեւեկության, իսկ նման վիճակում գտնվող մեքենան նույնիսկ պարեկների «ուշադրությանը» չէր արժանանում: Ստացվում է, որ ունենք իրավիճակ, երբ առնվազն երկու պետական գերատեսչություն դրսեւորում է անգործություն եւ արհամարհում Փաշինյանի հրահանգները՝ ձեռքի հետ էլ դժոխքի վերածելով երեւանցիների կյանքը: Ա կետից Բ կետ տեղափոխվելը դարձել է լրջագույն խնդիր մեզ համար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԻՆԵՐ ՇԱՐՈՒՆԱԿ ԵՂԵԼ ԵՆ»

Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանն ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձել է նույն վարչական շրջանում գտնվող Աղի լճում նախատեսված բարեկարգման աշխատանքներին:

- Ինչքա՞ն ժամանակ է նախատեսված աշխատանքների իրականացման համար:

- Քանի որ շինբարեկարգման ծրագիրը նախատեսված է, որքան ես եմ հասկացել, աշխատանքները պետք է ավարտենք մինչեւ մայիս ամիսը: Սակայն վստահ եմ, որ եթե շինարարները նույն տեմպով եւ տրամադրվածությամբ աշխատեն, հնարավոր է՝ աշխատանքներն ավելի շուտ ավարտենք:

- Ինչպե՞ս է առաջացել տվյալ տարածքի բարեկարգման անհրաժեշտությունը, եւ ո՞վ է բարձրացրել խնդիրը:

- Հարցը բարձրացրել են հենց բնակիչները: Քաղաքապետ Տիգրան Ավինյանը մոտավորապես 7-8 ամիս առաջ այցելեց այս տարածք, շրջեցինք, տեսավ առկա խնդիրները եւ հանձնարարեց, որպեսզի տարածքը բարեկարգվի: Դրանից հետո շինբարեկարգման ծրագիրը պատվիրեցինք, եւ այժմ աշխատանքներն արդեն իրականացվում են: Բնակիչները տարիներ շարունակ տարբեր խնդիրներ են բարձրացրել. այստեղ չկար կոյուղի, չկար զուգարան, չկար լվացվելու հնարավորություն եւ այլ անհրաժեշտ պայմաններ: Քաղաքապետը, տեսնելով այդ խնդիրները, հանձնարարեց լուծումներ տալ: Բացի այդ, տարածքում լուսավորություն չկար, ինչի հետեւանքով երեկոյան ժամերին մութ էր, իսկ նման պայմաններում, բնականաբար, անվտանգության հետ կապված խնդիրներն ավելի շատ են:

- Իսկ ի՞նչ է նախատեսում բարեկարգման նախագիծը:

- Նախագծի մանրամասներին ամբողջությամբ տեղյակ չեմ, քանի որ պատվիրատուն շինբարեկարգման կազմակերպությունն է: Նախագծով նախատեսված աշխատանքների մասին, կարծում եմ, ավելի մանրամասն կարող են ներկայացնել հենց իրենք:

- Մենք նաեւ նախորդ տարիներին հաճախ ենք այցելել այս տարածք, լուսաբանել եւ նկարահանումներ իրականացրել: Տեղի մշտական այցելուների համար այստեղ առկա խնդիրները վաղուց էին տեսանելի: Մասնավորապես՝ տարիներ շարունակ բարձրացվել է քարերի եւ հանդերձարանի խնդիրը: Ինչո՞ւ հենց հիմա որոշվեց իրականացնել այս աշխատանքները:

- Այո՛, այդ խնդիրները տարիներ շարունակ եղել են: Սակայն հարցը բարձրացվեց քաղաքապետի այցի ժամանակ: Նա անձամբ տեսավ առկա վիճակը եւ հանձնարարեց բարեկարգել տարածքը:

Պետք է նշել նաեւ, որ նախկինում այստեղ նույնիսկ ասֆալտ չկար: Այդ աշխատանքը մենք իրականացրել ենք մոտ երեք տարի առաջ: Ասֆալտապատումից հետո տարածքն արդեն ավելի բարեկարգ եւ գեղեցիկ տեսք ստացավ: Մենք նաեւ նստարաններ ենք տեղադրել, որպեսզի մարդիկ կարողանան նստել եւ հանգստանալ: Այսինքն՝ տարիների ընթացքում տարբեր աշխատանքներով փորձել ենք նպաստել, որ այստեղ մարդկանց կյանքի որակը բարելավվի, իսկ այժմ նպատակ ունենք տարածքը հասցնել ավելի ամբողջական եւ բարեկարգ վիճակի:

- Այսինքն՝ մինչեւ վերջերս խնդրի մասին քաղաքապետարանը տեղյա՞կ չէր:

- Քաղաքապետը խնդրի մասին իմացել է 2023 թվականից: Բայց նման նախագծերը մեկ օրում չեն իրականացվում: Նախ անհրաժեշտ է խնդիրը բարձրացնել, այնուհետեւ կազմել եւ պատվիրել նախագիծ, անցնել համապատասխան գործընթացները, եւ դրանից հետո միայն սկսել շինարարական աշխատանքները: Այս ամենը ժամանակ է պահանջում:

- Իսկ վարչական շրջանում առաջիկայում ի՞նչ այլ բարեփոխումներ են նախատեսվում:

- Վարչական շրջանում արդեն բավական մեծածավալ բարեփոխումներ են իրականացվել, եւ աշխատանքները շարունակվում են տարբեր հատվածներում: Տարիներ շարունակ բազմաթիվ բակերում որեւէ լուրջ բարեկարգում չէր իրականացվել, իսկ վերջին 3-4 տարիների ընթացքում արդեն շուրջ 54 բակ է բարեկարգվել: Փոխվում են վերելակները, վերանորոգվում եւ փոխվում են կոյուղու համակարգերը: Օրինակ՝ Մուշական համայնքը նախկինում ընդհանրապես կոյուղի չի ունեցել, իսկ այժմ այնտեղ արդեն կոյուղու համակարգ կա: Զրաշենում նույնպես մեծ աշխատանքներ են իրականացվել. այնտեղ մենք արդեն պատրաստ ենք, եւ կառուցվել է մոտ 4,5 կիլոմետր կոյուղատար համակարգ: Ընդհանուր առմամբ, մեր վարչական շրջանում բավական մեծածավալ աշխատանքներ են կատարվել եւ շարունակվում են: Էրեբունին Երեւանի ամենահին եւ ամենամեծ խնդիրներ ունեցող վարչական շրջաններից մեկն է, ուստի այստեղ բարեփոխումների անհրաժեշտությունը հատկապես մեծ է:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ԱԺ-ՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ փոխվարչապետի N 930-Ա որոշմամբ՝ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարար Արարատ Միրզոյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) վերաբերյալ ռազմավարական համագործակցության մասին շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը քննարկելիս կառավարության ներկայացուցիչ: Համապատասխան որոշումն ընդունվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա:

Որոշումը ստորագրել է փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը, որը փոխարինում է ԱՄՆ մեկնած վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Ս. Գ.

ՀԵՏԱՁԳԵԼ Է ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ադրբեջանական կողմը որոշել է հետաձգել հայ եւ ադրբեջանցի փորձագետների՝ «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության շրջանակում այս օրերին Երեւանում նախատեսված քննարկումները՝ «մինչեւ լարվածությունը թուլանա», «Շանթյուզին» հայտնել է Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ Բորիս Նավասարդյանը, շեշտելով, որ դա իր անձնական եզրահանգումն է:

«Հայկական կողմն ակնկալում էր, որ այս սուր իրավիճակում անհրաժեշտ է հանդիպել, փորձել փոխադարձ ըմբռնման հասնել ու պայմանավորվել այն մթնոլորտի մասին, որը ցանկալի է, որ ձեւավորվի տեղեկատվական միջավայրում, հանրային դաշտում, սակայն կարծես թե Ադրբեջանից մեր գործընկերները նպատակահարմար չեն գտնում շփվել այս փուլում»-ասել է Նավասարդյանը մեզ հետ զրույցում:

Հիշեցնենք, որ հայ եւ ադրբեջանցի փորձագետներն արդեն մի քանի փոխադարձ հանդիպումներ են ունեցել. վերջին անգամ ադրբեջանցի փորձագետները Երեւան էին ժամանել այս տարվա մայիսին՝ «Երեւանյան երկխոսություն-2026» միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով:

ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՀՈՂ Է ՎԱՃԱՌՎԵԼ

Պետական վերահսկողական ծառայության վերահսկողությամբ ուսումնասիրվել է օտարման ոչ ենթակա հողամասերի իրացման, ինչպես նաեւ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությամբ կադաստրային արժեքի նվազեցումից հետո օտարված հողատարածքների պետական գրանցման ոլորտում պետական մարմնի գործողությունների իրավաչափությունն ու հիմնավորվածությունը: Կոտայքի մարզի Առինջ համայնքի վարչական սահմաններում գտնվող, ինժեներական ենթակառուցվածքով՝ 700 մմ տրամագծով մայրուղային գազատարով ծանրաբեռնված, օտարման ոչ ենթակա 16.17 հա հողատարածքն աճուրդով վաճառվել է«Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանին պատկանող «Ավիասերվիս» Հ/Ձ ՓԲ ընկերությանը:

Օտարման ոչ ենթակա հողատարածքի վաճառքի հետեւանքով պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս: Խախտումներ են արձանագրվել նաեւ Առինջ համայնքում հողային պաշարների կառավարման, օգտագործման եւ տնօրինման գործընթացներում: Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության հիման վրա 2017 թվականին Առինջ համայնքի վարչական տարածքում գտնվող եւ համայնքի սեփականությունը հանդիսացող 11.2 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, 36.29 հա բնակավայրերի նպատակային նշանակության եւ 28.96 հա այլ բարձրարժեք՝ ընդհանուր 8 միլիարդ 38 միլիոն 9 հազար 325 դրամ կադաստրային արժեքով հողերը փոխադրվել են ցածրարժեք՝ ընդհանուր 5 միլոն 160 հազար 509 դրամ արժեքով գյուղատնտեսական նշանակության՝ արոտի կատեգորիայի: Արդյունքում՝ կադաստրային արժեքը նվազել է 8 մլրդ 32 մլն 848 հազար 816 դրամով կամ շուրջ 99.94 տոկոսով:

Դրանից հետո, անտեսելով օրենսդրական պահանջը, համաձայն որի մեկ լոտով օտարվող հողամասի առավելագույն չափը չէր կարող գերազանցել 20 հեկտարը, նշված հողատարածքները համայնքի ղեկավարի որոշմամբ դրվել են աճուրդի: Աճուրդների արդյունքում դրանք 21 միլիոն 533 հազար 157 դրամ գումարով օտարվել են Գագիկ Ծառուկյանին պատկանող մեկ այլ ընկերության՝ «Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ-ին: Գործարքները, սակայն, վերը նշված սահմանափակումների պատճառով իրավունքի պետական գրանցում չեն ստացել: Բայց նոր աճուրդներ հայտարարելու փոխարեն փոփոխվել են նախկինում կայացած աճուրդների արձանագրությունների, ինչպես նաեւ դրանց հիման վրա ընդունված եւ ուժի մեջ մտած համայնքի ղեկավարի որոշումների բովանդակությունները: Այնուհետեւ, ենթադրյալ կեղծ փաստաթղթերի հիման վրա կնքվել են անշարժ գույքի աճուրդ-վաճառքի 4 պայմանագրեր, որոնց միջոցով ապահովվել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման եւ այն Գագիկ Ծառուկյանին պատկանող ընկերությանը փոխանցելու գործընթացը:

Փաստվող դեպքերի առթիվ հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն, նախաձեռնվել են քրեական վարույթներ:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն այս շաբաթ Վաշինգտոնում կընդունի Չինաստանի նախագահ Սի Ցզինպինին: Սպասվում է, որ Չինաստանի առաջնորդին անձամբ կդիմավորի Թրամփը Էնդրյուսի ռազմաօդային բազայում, իսկ հաջորդ օրը Սպիտակ տանը նախատեսվում է պաշտոնական դիմավորման արարողություն՝ ռազմական ինքնաթիռների թռիչքով եւ շուրջ 500 զինծառայողների մասնակցությամբ: Սի Ցզինպինի այցը ԱՄՆ նրա առաջին պետական այցն է շուրջ մեկ տասնամյակի ընթացքում եւ Թրամփի երկրորդ նախագահական ժամկետի մեկնարկից ի վեր երկու առաջնորդների երրորդ հանդիպումը: Այցը կավարտվի ուրբաթ օրը եւ կուղեկցվի պաշտոնական ընթրիքներով, մասնավոր շրջայցերով ու մշակութային միջոցառումներով: Հանդիպումների առանցքային թեմաներից մեկը լինելու է ԱՄՆ-Չինաստան առեւտուրը: 2025 թվականի հոկտեմբերին ձեռք բերված առեւտրային համաձայնությունը, որով Վաշինգտոնը կասեցրել էր չինական ապրանքների նկատմամբ մաքսատուրքերի բարձրացումը, իսկ Պեկինը մեղմացրել էր հազվագյուտ հողային մետաղների արտահանման սահմանափակումները, նոյեմբերին լրանալու է: Փորձագետները սպասում են, որ կողմերը կքննարկեն դրա երկարաձգման հնարավորությունը: Միաժամանակ, ԱՄՆ-ի եւ Չինաստանի միջեւ առեւտրային բանակցությունները, որոնք անցկացվել են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակում, ըստ BBC-ի աղբյուրների, էական առաջընթաց չեն գրանցել: Բանակցությունների ընթացքում քննարկվել են ոչ սակագնային առեւտրային հարցերն ու գյուղատնտեսական ապրանքների արտահանումը: Բանակցությունները նախատեսվում է շարունակել Վաշինգտոնում:

Օրակարգում կլինի նաեւ արհեստական բանականությունը: ԱՄՆ-ն ու Չինաստանը մրցակցում են այս ոլորտում, իսկ Թրամփը բազմիցս ընդգծել է, որ արհեստական բանականության մրցավազքում Չինաստանին հաղթելը ԱՄՆ-ի առաջնահերթություններից է: Փորձագետները չեն բացառում, որ կողմերը կքննարկեն նաեւ արհեստական բանականության ոլորտում համագործակցության հնարավորությունները:

Առանձին կարեւոր թեմա է Թայվանը: ԱՄՆ Կոնգրեսը հաստատել է Թայվանին բազմամիլիարդանոց սպառազինության վաճառքը, սակայն գործարքը դեռ սպասում է Թրամփի ստորագրությանը: Չինաստանը երկար տարիներ հայտարարել է Թայվանի հետ «վերամիավորվելու» իր մտադրության մասին եւ չի բացառել ուժի կիրառումը:

Քննարկվելու են նաեւ ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների ընդհանուր բնույթն ու տնտեսական համագործակցությունը: ԱՄՆ-ում, սակայն, Չինաստանի նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ. Թրամփի վարչակազմի որոշ ներկայացուցիչներ եւ նրա աջակիցների մի մասը Պեկինին դիտարկում են որպես ազգային անվտանգության եւ տնտեսական մրցակցության լուրջ մարտահրավեր: ԱՄՆ-Չինաստան հարաբերություններում Թրամփը կարեւորում է անձնական շփումները Սի Ցզինպինի հետ: ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների ազգային կոմիտեի նախագահ Սթիվեն Օրլինսի խոսքով՝ Թրամփը կարծում է, որ երկու առաջնորդների հաճախակի հանդիպումները կարող են նվազեցնել հարաբերությունների առճակատման մակարդակը:

Ա. Վ.

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՈՎՔԵ՞Ր ԿԱԶԱՏՎԵՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

ArmLur.am-ը պարզեց, որ «e-draft» իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրվել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթը, որը մշակել է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

Նախագծով առաջարկվում է ՀՀ ՆԳՆ ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրել ուսումնառության ամբողջ ժամկետով: Խոսքը առաջին փուլում 70 տեղերի մասին է, որոնց թիվը հետագայում կարող է ավելացվել Կառավարության որոշմամբ:

Նախագծի համաձայն՝ կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած եւ ՆԳՆ համակարգում՝ ոստիկանության կամ փրկարար ծառայության պաշտոններում նշանակված անձանց նույնպես կտրվի տարկետում՝ օրենքով սահմանված անընդմեջ ծառայության ժամկետով, սակայն ոչ ավելի, քան մինչեւ 35 տարին լրանալը:

Միաժամանակ առաջարկվում է սահմանել, որ ՆԳՆ ուսումնական հաստատությունում պետական պատվերով միջին մասնագիտական կրթական ծրագիրն ավարտած անձինք կազատվեն պարտադիր զինվորական ծառայությունից, եթե սահմանված կարգով ծառայության անցնեն ոստիկանության կամ փրկարար ծառայության պաշտոններում եւ օրենքով սահմանված անընդմեջ ծառայության ժամկետով ծառայեն այդ համակարգում: Այդ ժամկետը նախատեսվում է մինչեւ 10 տարի, սակայն ոչ ավելի, քան մինչեւ անձի 35 տարին լրանալը:

Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ գործող կարգավորումները հնարավորություն չեն տալիս հանրակրթությունն ավարտելուց հետո անմիջապես համապատասխան մասնագիտական կրթություն ստանալ այն երիտասարդներին, որոնք իրենց ապագան ցանկանում են կապել ոստիկանության կամ փրկարար ծառայության հետ:

Նախատեսվում է, որ միջին մասնագիտական կրթական ծրագիրը կտեւի 1 տարի 6 ամիս: Այն ավարտած անձինք նշանակվելու են ոստիկանության կամ փրկարար ծառայության միջին խմբի պաշտոններում՝ 10 տարի անընդմեջ ծառայելու պայմանով: Միջին խմբում 5 տարի ծառայելուց հետո հնարավորություն է նախատեսվում անցնելու ավագ խմբի պաշտոնների, իսկ ավագ խմբում 3 տարի ծառայելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով, գլխավոր խմբի պաշտոնների:

Նախագծով նախատեսվում է նաեւ, որ միջին խմբի պաշտոնում նշանակվելու պահից տվյալ անձինք կհամարվեն ատեստավորված եւ կստանան Կառավարության սահմանած չափով հավելավճարի իրավունք:

Ըստ հիմնավորման՝ պետական բյուջեից մեկ սովորողի համար 1 տարի 6 ամիս տեւողությամբ կրթության համար անհրաժեշտ կլինի մոտ 4 մլն 333 հազար 320 դրամ: Այդ գումարից 1 մլն 710 հազար դրամը նախատեսվում է որպես ուսումնառության ամբողջ ընթացքում ամսական 95 հազար դրամ վարձատրություն, իսկ 2 մլն 623 հազար 320 դրամը՝ կրթական ծրագրի իրականացման այլ ծախսերի համար:

Նախագիծը e-draft-ում հանրային քննարկման է ներկայացվել սեպտեմբերի 18-ին եւ քննարկման ժամկետը սահմանված է մինչեւ հոկտեմբերի 3-ը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԴՈՒՐՍ ՉԻ ԳԱ

Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յոհան Վադեֆուլը հայտարարել է, որ Գերմանիան չի դուրս գա Միջազգային քրեական դատարանից (ՄՔԴ)՝նկատի ունենալով այն որպես կարեւոր եւ անհրաժեշտ միջազգային ինստիտուտ: Այս ելույթով նա մերժել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կոչը՝ 23-09-2026-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում կատարելով հայտարարություն, թե ՄՔԴ-ն «մերժված ինստիտուտ» է եւ բոլոր երկրները պետք է դուրս գան նրանից, գրում է Լուրեր.com-ը:

Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յոհան Վադեֆուլը հայտարարել է, որ Գերմանիան դուրս չի գա Միջազգային քրեական դատարանից (ՄՔԴ):

«Մենք դա անպայման չենք անի: Սա կարեւոր ինստիտուտ է», - ասել է Վադեֆուլը Deutschlandfunk ռադիոյով: Այդպիսով նա մերժել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կոչը՝ դուրս գալու ՄՔԴ-ից: «Անկեղծ ասած, ես չեմ հասկանում այս կոչի էությունը: Սա վերաբերում է այն ոլորտներին, որտեղ, ցավոք, մենք իսկապես ստիպված ենք ընդունել ԱՄՆ վարչակազմի քաղաքականության հետ տարաձայնությունները», - խոստովանել է Գերմանիայի արտգործնախարարը: Նա ընդգծել է, որ «այս դատական համակարգը մնում է անհրաժեշտ միջազգային մակարդակում»:

«Եւ, հետեւաբար, բացարձակապես պարզ է, որ այս հարցում մենք աջակցում ենք Միջազգային քրեական դատարանին», - եզրափակել է Վադեֆուլը:

Նախորդ օրը Թրամփը, ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, կոչ էր արել բոլոր երկրներին դուրս գալ ՄՔԴ-ից, որը նա անվանել էր «մերժված ինստիտուտ»:

ՊԱՏՐԱՍՏ Է ՀՅՈՒԲԸՆԿԱԼԵԼ

Թուրքիան պատրաստ է հյուրընկալել ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահների՝ Դոնալդ Թրամփի եւ Վլադիմիր Պուտինի հնարավոր հանդիպումը, ինչպես հայտնել է թուրքական կառավարության աղբյուրը: Այս հայտարարությունը կատարվել է այն համատեքստում, երբ Թրամփը հայտնել է Ուկրաինայում խաղաղության համաձայնագրի պայմանների վերաբերյալ Պուտինի հետ շարունակվող քննարկումների մասին: Թրամփն ու Պուտինը տարվա սկզբից ի վեր ունեցել են հինգ հեռախոսազրույց, որոնց վերջինը տեղի է ունեցել սեպտեմբերի 8-ին, փոխանցում է Լուրեր.com-ը:

Թուրքիան պատրաստ է հյուրընկալել ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի նախագահներ Դոնալդ Թրամփի եւ Վլադիմիր Պուտինի հանդիպումը եւ տրամադրել անհրաժեշտ օգնություն, եթե Վաշինգտոնն ու Մոսկվան դա խնդրեն, ՌԻԱ Նովոստիին հայտնել է թուրքական կաբինետի աղբյուրը:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը երեքշաբթի օրը հայտարարել է, որ կարող է կրկին հանդիպել Ռուսաստանի առաջնորդ Վլադիմիր Պուտինի հետ: Ամերիկացի նախագահը հավելել է, որ իր ռուս գործընկերոջ հետ քննարկում է Ուկրաինայում հնարավոր խաղաղության համաձայնագրի պայմանները: Նա ասել է, որ համաձայնագիրը օգուտ կբերի հակամարտության երկու կողմերին էլ: «Թուրքիան պատրաստ է կազմակերպել Թրամփի եւ Պուտինի հանդիպումը եւ ապահովել բոլոր անհրաժեշտ հարմարությունները, եթե երկու կողմերն էլ դա խնդրեն: Անկարան պատրաստ է տրամադրել անհրաժեշտ օգնություն նման հանդիպում անցկացնելու համար», - ասել է աղբյուրը:

Տարվա սկզբից ի վեր Պուտինը եւ Թրամփը ունեցել են հինգ հեռախոսազրույց: Վերջինը տեղի է ունեցել սեպտեմբերի 8-ին: Այդ ժամանակ առաջնորդները գնահատել են ԱՄՆ ներկայացուցիչների Մոսկվա եւ Կիեւ կատարած այցերի արդյունքները:

ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿ ԵՆ «ԼՅՐԵԼ»

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ

Երեկ լրացավ Վալոդյա Գրիգորյանի սպանության մեկ տարին, եւ ArmLur լրատվականի նկարահանող խումբը Մերձավան համայնքում էր, որտեղ արձանագրում էր, թե սպանությունից մեկ տարի անց ինչ իրավիճակ է համայնքում:

Հիշեցնենք, որ սպանությունը տեղի էր ունեցել 2025 թվականի սեպտեմբերի 23-ին՝ կեսգիշերին: Վալոդյա Գրիգորյանը իր ընկերների՝ Արծրուն Գալստյանի, քրեական ոստիկան Կարեն Աբրահամյանի հետ դուրս էր եկել իր առանձնատնից եւ զրուցում էր բակում: Արդյունքում դիմակավորված անձը, կրակոցներ արձակելով, մոտենում է նրանց: Հնչում են 18-ից ավելի կրակոցներ, որոնց հետեւանքով սպանվում են Վալոդյա Գրիգորյանը եւ քրեական ոստիկան Կարեն Աբրահամյանը:

Դեպքից օրեր անց կալանավորվեցին Մերձավանի բնակիչ Նարեկ Օհանյանը եւ Գեւորգ Հարությունյանը: Ըստ մեղադրական եզրակացության՝ Փարաքար համայնքի ղեկավար Վալոդյա Գրիգորյանի սպանությունը վենդետա է եղել, մինչդեռ կալանավորվածները դատարանում հակառակն են պնդում՝ կատարվածը վենդետա չէ:

Վալոդյա Գրիգորյանի գնդակահարությունից ամիսներ առաջ

Վալոդյա Գրիգորյանի սպանությունից ամիսներ առաջ Մերձավան համայնքի վարչական շրջանի ՔՊ-ական ղեկավար Միեր Ախտոյանի տան դիմաց վիճաբանություն էր եղել, իսկ պատճառը սպասվող համայնքապետի ընտրություններն էին: Վիճաբանության արդյունքում հնչել էր կրակոց, ու սպանվել էր Մերձավանի բնակիչ Նարեկ Օհանյանի եղբայրը՝ Գրիգոր Օհանյանը: Այդ դեպքի հետեւանքով մեղադրյալի աթոռին հայտնվեցին Վալոդյա Գրիգորյանի մտերիմները, նաեւ եղբայրը: Դեպքից հետո հնչել էր արտահայտություն՝ «Վալոդ, գլուխդ ուտելու ենք»:

Եւ ահա 2025 թվականի մարտի 30-ին Փարաքար խոշորացված համայնքում ընտրություններ էին, ու Վալոդյա Գրիգորյանը հաղթեց ՔՊ-ին: Սակայն 6 ամիս հետո նրան գնդակահարեցին իր տան դիմաց, ու սա էր պատճառը, որ նախաքննական մարմինը, այդ թվում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հրապարակային հայտարարեցին, որ կատարվածը վենդետա է: Մինչդեռ Վալոդյա Գրիգորյանի հարազատները պնդում են, որ կան պատվիրատուներ:

Զարմանալի ու կասկածելի էր այն, որ Վալոդյա Գրիգորյանի սպանությունից 10 օր առաջ Հայաստանը լքել էր Մերձավան համայնքի վարչական շրջանի ՔՊ-ական ղեկավար Միեր Ախտոյանը եւ մինչ օրս Հայաստան չի վերադարձել:

Գործը դատարանում

Վալոդյա Գրիգորյանի սպանության քրեական գործը դատարանում է: Մեղադրյալները պատրաստվում են խոսել ու պնդում են՝ կատարվածը վենդետա չէ:

Ու մինչ գործը քննվում է դատարանում, դատարան են հրավիրվում վկաներ, Մերձավանում սպանությունից 1 տարի անց բոլորը արդարություն են պահանջում:

ArmLur լրատվականի նկարահանող խումբը գնաց Վալոդյա Գրիգորյանի սպանությունից 10 օր առաջ Հայաստանը լքած ՔՊ-ական Միեր Ախտոյանի տուն: Ոստիկանները թույլ չտվեցին դռները թակել՝ նշելով, որ որեւէ մեկը չի բնակվում: Ստացվում է, որ սպանությունից մեկ տարի անց ոստիկանությունը դեռ հսկում է սպանությունը կատարողների եւ ենթադրյալ կապ ունեցողների տները, իսկ նրանք մեկուսացել են համայնքից:

Սպանությունը կատարած Գեւորգ Հարությունյանի տան մոտ եւս ոստիկաններ են հսկում: Արձանագրեցինք, որ կարմիր ներկով են շաղախել Գեւորգ Հարությունյանի տան պատուհանները՝ հասկացնելով, որ իրենց ձեռքերն արյունոտ են:

Ուժեղացված հսկողություն էր նաեւ Վալոդյա Գրիգորյանի սպանության գործով կալանավորված Նարեկ Օհանյանի տան շրջակայքում:

Այսպիսով, սպանությունից մեկ տարի անց շատ հարցեր մնում են անպատասխան: Նա մնաց քաղաքական իշխանության կոկորդին, նրան գնդակահարեցին ընտրվելուց հետո՝ չհաշտվելով նրա հաղթանակի հետ:

Կա՞ն պատվիրատուներ, թե՞ ոչ, եւ, ի վերջո, 41-ամյա Վալոդյա Գրիգորյանի երիտասարդ կյանքը ընդհատելով՝ ով ում ինչ հասկացրեց:

Մերձավանում հիշում են համայնքապետին ու ցավ ապրում. բոլորի աչքի առաջ մեծացավ նա, սիրվեց, ընդունվեց, հասավ բոլորի դարդ ու ցավին, ուստի Աստծո դատաստանը չի ուշանա: Մեղավորները մի օր պատասխան են տալու:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՇԵԾԿՈՏՈՒՔ

Արարատի մարզում ծեծկոտուքի գործով կալանավորել են Դավիթ Համբարձումյանի եղբորը:

Մեզ հայտնի դարձավ, որ Արարատի մարզում՝ հայտնի «Հրաշք այգի» ռեստորանում, վիճաբանություն-ծեծկռտուք է տեղի ունեցել: Արտաշատի ոստիկանների օպերատիվ գործողությունների շնորհիվ կանխվել է հնարավոր վրեժխնդրությունը, իսկ հիմնական մասնակիցները բերման են ենթարկվել: Դատարանը նրանցից մի քանիսի նկատմամբ տնային կալանք է կիրառել: Նրանց թվում է Մասիսի նախկին քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի եղբայրը:

Վիճաբանությունը տեղի է ունեցել Հովիկ Աբրահամյանի նախկին վարորդ Գոքորի «Հրաշք այգի» ռեստորանում:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ սեպտեմբերի 10-ին հերթական վիճաբանություն-ծեծկռտուքն է տեղի ունեցել Արարատի մարզում: Այդ օրը՝ ժամը 23:20-ի սահմաններում, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Արտաշատի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Արտաշատ խոշորացված համայնքի Դիտակ բնակավայրում գործող «Հրաշք այգի» ռեստորանային համալիրում վիճաբանություն եւ ծեծկռտուք է տեղի ունեցել:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ Արտաշատի համայնքային ոստիկանները պարզել են, որ ժամը 23:00-ի սահմաններում նշված ռեստորանային համալիրի 6-րդ սրահի հաճախորդներ՝ Արարատի մարզի բնակիչներ 49-ամյա Արմենակ Հ.-ն, 40-ամյա Սեւան Խ.-ն, 38-ամյա Գոռ Հ.-ն, 39-ամյա Ալբերտ Ն.-ն, 40-ամյա Ռաֆայել Հ.-ն, 50-ամյա Արարատ Լ.-ն եւ 37-ամյա Գոռ Խ.-ն, ռեստորանում տեղի ունեցած միջոցառման ժամանակ տեսանկարահանում կատարելու հարցի շուրջ վիճաբանել են նույն ռեստորանի մյուս հաճախորդների հետ: Նրանք, ըստ հաղորդման, կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, տեւական ժամանակ հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ, ինչն այնուհետեւ վերածվել է փոխադարձ հարվածների: Դրա հետեւանքով խաթարվել է նաեւ ռեստորանային համալիրի բնականոն աշխատանքը:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ նշված անձանց մեծ մասին համայնքային ոստիկանները «տաք հետքերով» հայտնաբերել եւ խուլիգանություն կատարելու կասկածանքով տեղափոխել են ոստիկանության Արտաշատի բաժին: Բաժին են հրավիրվել նաեւ նշված ռեստորանի մի քանի աշխատակիցներ, որոնք կատարվածի վերաբերյալ բանավոր հաղորդումներ են ներկայացրել:

Դեպքի փաստով ոստիկանության Արտաշատի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ միջադեպի մասնակիցներից Գոռ Հ.-ն, Գոռ Խ.-ն, Սեւան Խ.-ն եւ Ռաֆայել Հ.-ն դատարանի որոշմամբ վերցվել են տնային կալանքի: Քննիչը նրանց նկատմամբ կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդություն էր ներկայացրել Արարատի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Արտաշատի նստավայր:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է

ԱՐԺԱՆԱՑԱՎ ՄԵԴԱԼԻ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի միջնորդությունը՝ համաձայն Սահմանադրության 136-րդ հոդվածի եւ «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» օրենքի 5.3-րդ հոդվածի 1-ին մասի, Անկախության տոնի առթիվ, սահմանադրական կարգի պահպանության, իրավակարգի եւ օրինականության ամրապնդման գործում ներդրած ավանդի համար Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով Մխիթար Գոշի մեդալով է պարգեւատրվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Ծովակ Արայիկի Մնացականյանը:

Սակայն ուշագրավն այն է, որ Ծովակ Մնացականյանը հայտնվել էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կասկածների տակ, եւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը բացասական եզրակացություն է տվել Մնացականյանի բարեվարքության վերաբերյալ:

Մասնավորապես, 2023-ին Մնացականյանը հավակնել է առաջխաղացում ունենալ Դատախազությունում, որի համար պետք է բարեվարքության ստուգում անցներ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը բացասական եզրակացություն է տվել Մնացականյանի բարեվարքության վերաբերյալ: Ավելին՝ նրա հայտարարագիրը կասկածներ է հարուցել, եւ կառույցից դիմել են Դատախազություն՝ վարույթ նախաձեռնելու հարցով, եւ վարույթ է հարուցվել:

Ամենայն հավանականությամբ, այս պահին Մնացականյանին առնչվող վարույթը կարճվել է:

Ի դեպ, ԿԿՀ-ն մի քանի անգամ է Ծովակ Մնացականյանի բարեվարքության վերաբերյալ նույն հիմքով բացասական եզրակացություն տվել, որի պատճառով նաեւ տեւական ժամանակ առաջխաղացում չէր ունենում:

Սակայն ավելի ուշ հայտնի դարձավ, որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի երեք անդամներից երկուսը քվեարկել են թեկնածուի բարեվարքության վերաբերյալ դրական եզրակացություն տրամադրելու օգտին, մեկը՝ բացասական»:

Հավելենք, որ Ծովակ Մնացականյանը Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի, Սերժ Սարգսյանի, Գագիկ Բեգլարյանի, Արմեն եւ Սերգեյ Սմբատյանների, Հասմիկ Պողոսյանի, Նարեկ Մալյանի, Պողոս Պողոսյանի սպանության, այս գործով կեղծ փորձագիտական եզրակացություն տալու եւ մի շարք այլ աղմկահարույց գործերով դատախազն է:

Ք. Մ.

● *Սեպտեմբերի 14-ից 21-ը Երեւանում հայտնաբերվել է ճանապարհային երթեւեկության կանոնների 5833 խախտում:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԻՍԱԳՐԱԳԵՏ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտարարություն է տարածել. «Հարգելի՛ բնակիչներ: Սեպտեմբերի 27-ին՝ 44-օրյա պատերազմի 6-րդ տարելիցին, Դիլիջանում առաջին անգամ ծաղիկներ կխոնարհենք տարբեր ժամանակներում բանակային ծառայության եւ պատերազմների ընթացքում Դիլիջան համայնքի զոհերի հիշատակին նվիրված նորակառույց հուշարձանին»: « Զոհերի հիշատակին հուշարձան» եզրույթը հասկանալի է, էլ ինչո՞ւ են «նվիրված» բառն էլ անհարկի կերպով ավելացրել: Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը, Հովհաննավանքում մասնակցելով կարգալույծ հռչակված «տեր Արամի»՝ Ստեփան Ասատրյանի հրավիրած «պատարագին», այնտեղ վեճի էր մտել լրագրողների հետ ու նրանց ասել. «Ես այնքան բան եմ սովորել, որ հիմա ձեզ բան եմ բացատրում: Ձեր նմաններին կարող եմ դաստիարակել: Այնքան կրթություն եմ ստացել, որ երկար ժամանակ փորձես ապրել, չես կարող իմ չափ կրթություն ստանալ»: Համայնքապետարանի կայքում զետեղված վերոհիշյալ հայտարարությունից երեւում է, թե ինչքան են կրթություն ստացել Դիլիջանի համայնքապետն ու համայնքապետարանի աշխատակիցները»:

ՄԵՐԺՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցների պարգեւատրման համար 2026թ.-ի պետական բյուջեով նախատեսված է 42 միլիոն 515 հազար 900 դրամ, իսկ աշխատակազմի քաղաքացիական ծառայողների պարգեւատրման համար՝ 23 միլիոն 36 հազար 500 դրամ: 2026 թվականին մարզի սոցիալապես անապահովներին մարզպետի աշխատակազմի միջոցով պետբյուջեից տրվող ֆինանսական աջակցության համար նախատեսված է 59 միլիոն 833 հազար 800 դրամ: Ստացվում է, որ մարզպետի աշխատակազմի 66 աշխատակիցները՝ պետական եւ քաղաքացիական ծառայողները, որոնք համեմատաբար բարձր աշխատավարձ են ստանում, աշխատավարձից զատ՝ այս տարի պետբյուջեից ստացել ու ստանալու են 65 միլիոն 883 հազար 400 դրամ պարգեւավճար, իսկ մարզի սոցիալապես անապահովներին տրվել ու տրվելու է ընդամենը 59 միլիոն 833 հազար 800 դրամ դրամ ֆինանսական օգնություն: Մարզպետի աշխատակազմին հարցում եմ արել «Սեպտեմբերի 11-ի դրությամբ, 2026 թվականի ընթացիկ ժամանակաընթացքում մարզի սոցիալապես անապահովներից, դրամական օգնության համար Տավուշի մարզպետի աշխատակազմում քանի՞ դիմում է եղել, դրանից քանի՞սն է է մերժվել, որո՞նք են եղել մերժման պատճառները»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Սույն թվականի սեպտեմբերի 11-ի դրությամբ մարզպետի աշխատակազմ դիմել է 479 քաղաքացի: Դրամական օգնության դիմումներից մերժվել է 41 քաղաքացու: Մերժումների պատճառներն են՝ նույն քաղաքացու կողմից հաճախակի դիմում ներկայացնելը, նայած կարգավիճակին՝ ընտանեկան նպաստ ստանալը, մարզպետարանի իրավասությունից դուրս՝ ոչ սոցիալական ու հրատապության խնդիրների լուծման, ուսման վճարների համար դիմելը եւ այլ իրավիճակների դեպքում»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՆԵՑՎԱԾՔ

Ո՞Վ Է ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԸ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է իր ընթերցողներին ներկայացնել, թե ովքեր են զբաղեցնում պետական համակարգում կարեւոր պաշտոններ, ինչ ճանապարհ են անցել եւ ինչ ունեցվածք են հայտարարագրել:

Այս անգամ մեր ուսումնասիրության կենտրոնում է Արտաքին հետախուզության ծառայության պետի տեղակալ Հրանտ Ջիլավյանը:

Ո՞վ է Հրանտ Ջիլավյանը

Հրանտ Ջիլավյանը ծնվել է 1995 թվականին եւ մասնագիտությամբ իրավաբան է: Մինչեւ Արտաքին հետախուզության ծառայության պետի տեղակալի պաշտոնում նշանակվելը նա աշխատել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում, իսկ որոշ ժամանակ զբաղեցրել է նաեւ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը: Ջիլավյանը դասավանդում է Երեւանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում: Արտաքին հետախուզության ծառայության պետի տեղակալի պաշտոնը նա ստանձնել է 2024 թվականի փետրվարի 6-ին: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Ջիլավյանի՝2024 եւ 2025 թվականների հայտարարագրերը՝ հասկանալու համար, թե այդ ժամանակահատվածում ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել նրա ունեցվածքում, դրամական միջոցներում եւ եկամուտներում:

Անշարժ գույք

2024 թվականին Ջիլավյանն ունեցել է Երեւանի տարածքում գտնվող բնակարանի 1/3 բաժնային սեփականություն: Բնակարանը ձեռք է բերվել 2021 թվականի նոյեմբերի 24-ին՝ գնման եղանակով: 2024 թվականի ընթացքում նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ որեւէ անշարժ գույք չի օտարել: 2025 թվականի սկզբում նրա ունեցվածքում կրկին առկա է եղել նույն բնակարանի 1/3 բաժինը: Տարվա ընթացքում նույնպես անշարժ գույքի ձեռքբերում կամ օտարում չի արձանագրվել: Այսինքն՝2025 թվականի վերջին Ջիլավյանի անշարժ գույքի մասով փոփոխություն չի եղել:

Ավտոմեքենա

2024 թվականի հայտարարագրում Ջիլավյանը ունեցել է 2004 թվականի արտադրության Volkswagen ավտոմեքենա, որը ձեռք էր բերել 2023 թվականի ապրիլի 21-ին: 2025 թվականին, սակայն, մեքենայի մասով փոփոխություն է տեղի ունեցել: Հոկտեմբերի 14-ին Ջիլավյանը ձեռք է բերել 2021 թվականի արտադրության Nissan ավտոմեքենա՝ 5 մլն 800 հազար դրամով: Դրանից հետո՝ նոյեմբերի 10-ին,

Ջիլավյանը 2 մլն 50 հազար դրամով վաճառել է 2004 թվականի Volkswagen-ը: Այսպիսով, 2025թ. վերջին Ջիլավյանի հայտարարագրում առկա է եղել 2021թ. արտադրության Nissan ավտոմեքենան:

Դրամական միջոցներ

2024 թվականի սկզբում Ջիլավյանի չորս բանկային հաշիվներում առկա է եղել ընդհանուր 1 մլն 746 հազար 939 դրամ, իսկ տարվա վերջում՝ 5 մլն 664 հազար 375 դրամ: Այսինքն՝բանկային հաշիվների մնացորդներն ավելացել են 3 մլն 917 հազար 436 դրամով:

Կանխիկ միջոցները, հակառակը, նվազել են. 2024 թվականի սկզբում Ջիլավյանը հայտարարագրել էր 4 մլն 750 հազար դրամ, իսկ տարվա վերջում՝ 3 մլն 700 հազար դրամ:

2025 թվականին բանկային հաշիվներում առկա գումարն արդեն զգալիորեն աճել է: Տարվա սկզբում չորս հաշիվներում եղել է համապատասխանաբար 6,750 դրամ, 212,774 դրամ, 5 մլն 300 հազար 800 դրամ եւ 144,051 դրամ: Տարվա վերջում նույն հաշիվների մնացորդները կազմել են համապատասխանաբար 7,060 դրամ, 422,052 դրամ, 10 մլն 51 հազար 828 դրամ եւ 1 մլն 176 հազար 768 դրամ:

Այսպիսով, 2025 թվականի սկզբի 5 մլն 663 հազար 375 դրամի փոխարեն տարվա վերջին բանկային հաշիվներում Ջիլավյանն ունեցել է 11 մլն 657 հազար 708 դրամ: Կանխիկ գումարը եւս փոփոխվել է. եթե 2025 թվականի սկզբում այն կազմել է 3 մլն 700 հազար դրամ, ապա տարեվերջին՝ 1 մլն 750 հազար դրամ:

Եկամուտ

2024 թվականին Հրանտ Ջիլավյանի ընդհանուր եկամուտը կազմել է 18 մլն 77 հազար 400 դրամ: Դրանից 15 մլն 399 հազար 224 դրամը ստացել է Արտաքին հետախուզության ծառայությունից, 1 մլն 861 հազար 266 դրամը կազմել է եկամտային հարկի վերադարձը, 496 հազար 910 դրամը ստացել է Երեւանի պետական համալսարանից, իսկ եւս 320 հազար դրամ հայտարարագրվել է աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումների տեսքով:

2025 թվականին նրա ընդհանուր եկամուտն արդեն կազմել է 26 մլն 835 հազար 865 դրամ: Այդ գումարից 22 մլն 253 հազար 54 դրամը ստացել է Արտաքին հետախուզության ծառայությունից, 548 հազար 133 դրամը՝Երեւանի պետական համալսարանից, 1 մլն 818 հազար 206 դրամը կազմել է եկամտային հարկի վերադարձը: Բացի այդ, ԱԿԲԱ Բանկից ստացած այլ եկամուտը կազմել է 166 հազար 472 դրամ, իսկ Volkswagen-ի վաճառքից Ջիլավյանը ստացել է 2 մլն 50 հազար դրամ:

Այսպիսով, 2025 թվականին նրա հայտարարագրված եկամուտը 2024 թվականի համեմատ ավելացել է 8 մլն 758 հազար 465 դրամով:

Վարկային պարտավորություններ

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ջիլավյանի վարկերի մայր գումարի մնացորդը կազմել է ընդհանուր 42 մլն 760 հազար 445 դրամ: Դրանցից մեկը կազմել է 24 մլն 550 հազար դրամ, որը կապված է Երեւանի Նոր Նորք վարչական շրջանում կառուցվող շենքի նախագծային բնակարանի հետ: Մյուս վարկի մնացորդը կազմել է 18 մլն 210 հազար 445 դրամ եւ կապված է Երեւանի Նորք-Մարաշում գտնվող բնակարանի հետ:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պարտավորությունների ընդհանուր մնացորդը նվազել է եւ կազմել 40 մլն 643 հազար 836 դրամ: Դրանցից մեկի մնացորդը կազմել է 22 մլն 995 հազար 608 դրամ, մյուսինը՝ 17 մլն 648 հազար 228 դրամ:

Տարվա ընթացքում վարկերի մարմանն ուղղված վճարումները կազմել են ընդհանուր 5 մլն 485 հազար 35 դրամ:

Ինչ է փոխվել մեկ տարվա ընթացքում

Եթե 2024թ. վերջում Հրանտ Ջիլավյանի ունեցվածքում առկա էր Երեւանի բնակարանի 1/3 բաժինը, 2004թ. Volkswagen, ապա 2025 թվականի վերջում բնակարանի բաժինը մնացել է անփոփոխ, Volkswagen-ը փոխարինվել է 2021թ. Nissan-ով: Միաժամանակ, նրա բանկային հաշիվների ընդհանուր մնացորդը 5 մլն 664 հազար 375 դրամից հասել է 11 մլն 657 հազար 708 դրամի, իսկ կանխիկ գումարը 3 մլն 700 հազար դրամից նվազել է մինչեւ 1 մլն 750 հազար դրամ: Տարեկան եկամուտը եւս աճել է՝18 մլն 77 հազար 400 դրամից հասնելով 26 մլն 835 հազար 865 դրամի, իսկ վարկային պարտավորությունների մնացորդը 42 մլն 760 հազար 445 դրամից նվազել է մինչեւ 40 մլն 643 հազար 836 դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ Է ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից ուսումնասիրվել է Վաղարշապատ համայնքի Կոմիտասի հրապարակում գտնվող կինոթատրոնի շենքի եւ դրան կից հողամասի օտարման գործընթացի իրավաչափությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարի զեկուցմամբ, առանց սահմանված կարգով իրականացված գույքի գնահատման արդյունքի՝Կառավարության 2004 թվականի մարտի 11-ի թիվ 282-Ա որոշմամբ թույլատրվել է պետական սեփականություն հանդիսացող կինոթատրոնի շենքն ուղղակի վաճառքով օտարել ֆիզիկական անձին՝ վաճառքի գինը սահմանելով 55 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, այն դեպքում, երբ օտարումից շուրջ երեք ամիս անց, առանց փաստացի վիճակի փ18ոփոխության, վերոնշյալ գույքի կադաստրային արժեքը կազմել է 218 միլիոն 215 հազար դրամ: Ուսումնասիրությամբ պարզվել է նաեւ, որ առուվաճառքի պայմանագրով հողամասի վարձակալության իրավունքի փոխանցում նախատեսված չլինելու պայմաններում՝ պետական սեփականություն հանդիսացող 0,266 հա մակերեսով հողամասի նկատմամբ գրանցվել է ֆիզիկական անձի վարձակալության իրավունքը, որը հետագայում հիմք է հանդիսացել նրա կողմից 18 միլիոն 513 հազար դրամ կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ անհատույց սեփականության իրավունք ձեռք բերելու համար: Պարզվել է նաեւ, որ 0,266 հա մակերեսով հողամասից 1253 քմ մակերեսով հատվածը՝մայթերն ու անցումները, գտնվել են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների տիրույթում եւ ենթակա չեն եղել օտարման: Դատախազը, պետական շահերի պաշտպանության լիազորություններն իրականացնելու շրջանակում հայտնաբերելով առերեւույթ հանցանքի հատկանիշներ, հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե, նախաձեռնվել է քրեական վարույթ: Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հայց է ներկայացվել դատարան, որն ընդունվել է վարույթ:

● *Մարզերում սեպտեմբերի 14-ից 21-ը հայտնաբերվել է ճանապարհային երթեւեկության կանոնների 15129 խախտում:*

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ԿՏԵՂԱԲԱՇԽԻ ԴՈԼԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Ս.թ. սեպտեմբերի 24-ից մինչեւ 2027թ. փետրվարի 24-ն ընկած ժամանակահատվածում Հայէկոնոմբանկը կտեղաբաշխի իր կողմից թողարկված դոլարային պարտատոմսերի հերթական տրանշը:

4 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերը ներառում են 40,000 հատ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմս՝ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

Պարտատոմսերի արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը 6% է, արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային, շրջանառության ժամկետը՝ 48 ամիս, իսկ պարտատոմսերի մարման ամսաթիվը՝ 24.09.2030թ.:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման Հայաստանի ֆոնդային բորսայում եւ գնանշվելու են շուկա ստեղծողի (Market2aker) կողմից:

Պարտատոմսերի ծրագրային ազդագրի (գրանցված ՀՀ ԿԲ-ի կողմից) եւ թողարկման վերջնական պայմանների էլեկտրոնային տարբերակները կարելի է ներբեռնել Բանկի կայքէջից, իսկ թղթային տարբերակը հնարավոր է ձեռք բերել՝ այցելելով Բանկի գլխամասային գրասենյակ (հասցե՝ ք. Երեւան, Պապ թագավորի 23/1):

Պարտատոմսերը կարող են ձեռք բերել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք AEB MOBILE հավելվածի կամ AEB ONLINE համակարգի միջոցով, ինչպես նաեւ կարող են մոտենալ Հայէկոնոմբանկի Գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով սահմանված կարգով լրացված Պարտատոմսերի ձեռքբերման հայտ/հայտեր:

Հիշեցնենք, որ՝

- «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակված պարտատոմսերի դիմաց մինչեւ 2027թ. դեկտեմբերի 31-ը վճարվող արժեկտրոնային եկամուտները ենթակա չեն հարկման:
- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորվում են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Գ)

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ Գ

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

Արդշինբանկը սեպտեմբերի 8-11-ը Չինաստանի Սյամեն քաղաքում մասնակցել է բանկերի եւ ձեռնարկությունների համագործակցության միջազգային ցուցահանդեսին: Այն անցկացվում է Չինաստանի միջազգային ներդրումային եւ առեւտրի 26-րդ ցուցահանդեսի շրջանակում:

Այս տարվա միջոցառմանը մասնակցում էին տարբեր երկրներից ֆինանսական հաստատություններ եւ բիզնեսներ, որոնք իրականացնում են փորձի փոխանակում եւ քննարկում համագործակցության նոր ուղղություններ:

Արդշինբանկի մասնակցության առանցքում չինական շուկայի եւ դրա ֆինանսական ու գործարար միջավայրի ուսումնասիրությունն է, ինչպես նաեւ չինական եւ միջազգային ֆինանսական կառույցների ու ընկերությունների հետ նոր կապերի ձեւավորումը:

«Մասնակցությունն այս միջոցառմանը լավ հնարավորություն է՝ անմիջականորեն ծանոթանալու չինական շուկայի առանձնահատկություններին եւ հասկանալու, թե ինչպիսի ֆինանսական լուծումների ու համագործակցության ձեւաչափերի պահանջարկ կա այնտեղ: Միջազգային ֆինանսական կառույցների եւ բիզնեսների ներկայացուցիչների հետ հանդիպումները թույլ են տալիս գնահատել փոխգործակցության կոնկրետ ուղղություններ եւ ձեւավորել նոր գործնական կապեր: Այս շփումները կարեւոր են նաեւ հայ-չինական առեւտրատնտեսական կապերի զարգացման տեսանկյունից, քանի որ նոր գործարար կապերը կարող են հիմք դառնալ հետագա համագործակցության համար», - նշեց Արդշինբանկի Ներդրումային բիզնեսի տնօրենի տեղակալ, Ներդրողների հետ աշխատանքների վարչության պետ Աստղիկ Մանրիկյանը:

Արդշինբանկը Հայաստանի առաջատար բանկն է: Այն մատուցում է բազմաբնույթ ունիվերսալ բանկային ծառայություններ՝ տրամադրելով լուծումներ մանրածախ, կորպորատիվ, ներդրումային, ինչպես նաեւ փրայվիթ բանկինգի ու ակտիվների կառավարման ոլորտներում: Արդշինբանկն ունի շուրջ 912,000 հաճախորդ, որոնց սպասարկում են բանկի 2,400-ից ավելի աշխատակիցներ: Բանկում ներդրված է ծառայությունների մատուցման ու վաճառքի հզոր բազմախողովակ պլատֆորմ՝ 73 մասնաճյուղերով, համապարփակ մոբայլ եւ օնլայն բանկինգի համակարգերով: Բանկն ունի երկրում ամենալայն մասնաճյուղային ցանցը, ինչպես նաեւ ներկայացուցչություն Փարիզում:

Արդշինբանկը Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's (BB- (Stable)), Moody's (Ba3 (Positive)) եւ Fitch (BB- (Positive)) վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշեր: Բանկն ունի Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար վարկանիշ, ինչը մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշն է:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՀՈՒԾԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ Գ

Fast Shift վճարահաշվարկային ընկերությունն ու Yandex Go-ն օրերս փոխըմբռնման հուշագիր են ստորագրել, որի շրջանակում Fast Shift էլեկտրոնային դրամապանակի վճարային ծառայությունն ինտեգրվել է Yandex Go հավելվածում:

Fast Shift հավելվածն առաջին էլեկտրոնային դրամապանակն է Հայաստանում, որն ինտեգրվել է Yandex Go հավելվածում որպես վճարային մեթոդ: Նախաձեռնությունը միտված է օգտատերերի համար առավել հարմար եւ շահավետ վճարային փորձառություն ստեղծելուն՝ միաժամանակ առաջարկելով մի շարք առավելություններ:

Fast Shift վճարահաշվարկային ընկերության գործադիր տնօրեն Իրինա Գասպարյանն ընդգծել է, որ երկու տեխնոլոգիական ընկերությունների գործակցությունը նոր հեռանկարներ է ստեղծում հաճախորդների փորձառության բարելավման եւ նոր լուծումների ներդրման համար. «Fast Shift-ի համար շատ առանձնահատուկ է այս հնարավորությունը եւ այս համագործակցությունը: Նախ՝ ինտեգրվել ենք ոլորտի առաջատարին, որն ունի միլիոնից ավելի օգտատեր եւ այդ օգտատերերը փաստացի հնարավորություն են ստանում նաեւ օգտվել Fast Shift հավելվածից եւ Fast Shift վճարման եղանակից: Առավելությունները շարունակական են լինելու», - ասել է նա:

Համագործակցության առաջին փուլում Yandex Go հավելվածում Fast Shift դրամապանակով վճարող օգտատերերը կարող են ստանալ 30% զեղչ մինչեւ 3 ուղեւորության համար: Գործակցությունը լինելու է շարունակական եւ ընդգրկելու է Yandex Go-ի ծառայությունների ավելի լայն շրջանակ, ինչն ուղեկցվելու է մի շարք առավելություններով Fast Shift դրամապանակի միջոցով վճարումներ կատարած օգտատերերի համար:

Yandex Armenia-ի ղեկավար, Yango Group-ի Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի տարածաշրջանային ղեկավար Արամ Մխիթարյանը կարեւորել է ընկերությունների գործակցությունը. «Fast Shift-ն առաջին հայկական ընկերությունն է, որի դրամապանակը մենք ինտեգրել ենք, այսինքն՝ տրամադրում ենք մեր օգտատերերին ալտերնատիվ վճարման մեթոդ: Դա կարեւոր է այն պատճառով, որ մենք լոկալ վճարահաշվարկային ընկերություններին կարողանում ենք հնարավորություն տալ ստանալու հասանելիություն հասարակության լայն զանգվածներին», - ասել է նա:

Fast Shift վճարահաշվարկային ընկերությունն արագ եւ անվտանգ էլեկտրոնային դրամապանակ է, որը ֆինտեխ լուծումների հիման վրա մատուցում է 400-ից ավելի ծառայություններ:

Yandex Go-ն թվային հարթակ է, որը միավորում է մի քանի քաղաքային ծառայություններ: Հավելվածի միջոցով կարելի է պատվիրել ուղեւորություններ եւ սնունդ ռեստորաններից, առաքել իրեր, վարձակալել ինքնագլորներ եւ շարժական լիցքավորիչներ, հետեւել հասարակական տրանսպորտի շարժին եւ օգտվել այլ հնարավորություններից:

Fast Shift վճարահաշվարկային ընկերությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ

«ԵՍ ՉԵՄ ՎԱԽԵՆՈՒՄ ՊԱՐՏՎԵԼՈՒՑ»

Սեպտեմբերի 25-ին մեկնարկում են Ազգերի լիգայի խաղերը, իսկ Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականը մրցաշարում առաջին հանդիպումն անցկացնելու է սեփական հարկի տակ՝ ընդունելով Լատվիայի ազգային հավաքականին: Այս եւ մի շարք այլ հարցերի շուրջ ArmLur.am-ի հետ զրույցում խոսել է Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը:

- Պարոն Մելիքյան, սեպտեմբերի 25-ից մեկնարկում են Ազգերի լիգայի խաղերը: Որքանո՞վ է Հայաստանի ազգային հավաքականը պատրաստ մրցաշարին:

- Եթե անկեղծ լինեմ, հոգեբանորեն ես պատրաստ եմ եւ պատրաստ եմ նաեւ թիմին: Բայց մեր կորուստները որոշակի խնդիրներ են ստեղծում: Ունենք ութ ֆուտբոլիստ, որոնք վնասվածքներ ունեն: Չեմ հիշում՝ ակումբային կամ մարզչական կարիերայիս ընթացքում նման դեպք եղած լինի, երբ միանգամից ութ ֆուտբոլիստի հետ կապված խնդիր ունենանք: Բացի այդ, հրավիրված ֆուտբոլիստներից հինգը խաղային պրակտիկա չունեն:

- Այսինքն՝ հավաքականը մրցաշարին ներկայանում է բավական լուրջ խնդիրներով:

- Այո՛, լուրջ խնդիրներով: Ես չէի սպասում, որ այսքան խնդիրներ կունենանք, բայց փաստը մնում է փաստ. ունենք այն, ինչ ունենք: Ամեն դեպքում ես հուսահատվող մարդ չեմ: Դուխս չեմ գցի եւ կփորձեմ իմ թիմին հնարավորինս ոգեւորել ու պատրաստել: Իհարկե, միայն ոգեւորությունը ֆուտբոլ խաղալու համար քիչ է: Որակը շատ կարեւոր է, իսկ մենք որակային լուրջ կորուստներ ունենք: Բայց ամեն դեպքում պետք է պատրաստվենք եւ պայքարենք:

- Ովքե՞ր են, մասնավորապես, դաշտ դուրս գալու «Լատվիայի» հետ առաջին խաղում:

- Հիմա չեմ կարող ասել, թե ովքեր են դուրս գալու դաշտ: Բայց կաշխատեմ այնպես տրամադրել թիմը, որ պայքարող տղաներ դուրս գան խաղադաշտ:

- Առաջին հանդիպումը լինելու է Լատվիայի ազգային հավաքականի դեմ: Որքանո՞վ եք ուսումնասիրել մրցակցին, եւ ի՞նչ առանձնահատկություններ եք նկատել նրանց խաղում:

- Բոլոր մրցակիցներին հասցրել ենք վերլուծել եւ բավական լավ ճանաչում ենք: Եթե մենք ունենայինք այն որակով ֆուտբոլիստներին, որոնցից հիմա զրկված ենք, ապա Լատվիայի հետ համեմատության մեջ որոշակի առավելություն կունենայինք: Բայց այս կորուստների պայմաններում կասեի՝ 50/50 է: Պետք է պայքարենք: Չգիտեմ՝ ինչպես կստացվի: Ես նոր եմ սկսելու թիմի հետ աշխատանքը, շատ ֆուտբոլիստների վիճակին դեռ պետք է ծանոթանամ: Կաշխատենք, կծանոթանանք եւ կպատրաստվենք:

- Իսկ Չեռնոգորիայի եւ Կիպրոսի հավաքականների խաղը որքանո՞վ եք ուսումնասիրել: Ի՞նչ առանձնահատկություններ ունեն այս երեք մրցակիցները, եւ նրանց դեմ հատուկ մարտավարություն մշակվո՞ւմ է:

- Յուրաքանչյուր թիմի դեմ ունենք հատուկ մարտավարություն: Առնվազն երկու պլան ենք մշակում, որպեսզի կարողանանք աշխատել արդյունքի հասնելու ուղղությամբ: Չեռնոգորիան շատ լավ հավաքական է՝ որակյալ ֆուտբոլիստներով: Նրանց մարզիչը փոխվել է, եւ նոր մարզիչն էլ լավ աշխատանք է տանում: Նրանք ունեն բարձրակարգ առաջնություններում հանդես եկող ֆուտբոլիստներ, որոնք նաեւ գոլեր են խփում: Լուրջ մրցակից է, այնպես որ մեզ համար հեշտ չի լինելու:

- Այս մրցաշարում որքանո՞վ եք պատրաստվում խաղաժամանակ տրամադրել երիտասարդ ֆուտբոլիստներին:

- Տեղ տալու եմ: Ես ցանկացած հավաքականում աշխատելիս այդ ուղղությամբ եմ աշխատում: Եւ տեղ տվել եմ, եւ տեղ տալու եմ: Կտեսնեք՝ երիտասարդ ֆուտբոլիստներ նույնպես դաշտ դուրս կգան:

- Պարոն Մելիքյան, երբ գլխավորեցիք Հայաստանի ազգային հավաքականը, առջեւում Պորտուգալիայի հետ խաղերն էին: Այդ շրջանում հավաքականը կարելի է ասել՝ հաջողություններ չէր գրանցում: Դուք ստանձնեցիք գլխավոր մարզչի պաշտոնը: Ինչո՞ւ որոշեցիք այդ պահին վերցնել այդ պատասխանատվությունը, եւ արդյո՞ք մտածում էիք, թե ինչ կլինի, եթե Պորտուգալիայի դեմ պարտվեք:

- Ես չեմ վախենում պարտվելուց: Ես մտածում էի, որ մեր ազգային հավաքականի համար դժվար օրեր են, դժվար ժամանակահատված: Եւ ես ուզում էի այդ պահին լինել հավաքականի կողքին, թիմին տանել առաջ այս դժվար իրավիճակում: Եթե գնում ես պատերազմի, չպետք է մտածես մահանալու մասին: Ես այդ տեսակն եմ: Մենք պատերազմ տեսած մարդիկ ենք՝ եւ հաղթած, եւ պարտված պատերազմ, բայց մեր ոգին չի կոտրվում: Նույնը ես տեսնում եմ նաեւ ֆուտբոլում. մենք կարող ենք հաղթել, կարող ենք պարտվել, բայց մեզ համար պայքարը պետք է շարունակվի: Շատ եմ կարեւորում ոտքի վրա կանգնելը, չհուսահատվելը եւ առաջ շարժվելը: Իսկ ինձ համար հիասթափեցնող է, երբ ֆուտբոլիստներ կան, որոնք այդ ժամանակահատվածում հրաժարվում են խաղալ ազգային հավաքականում: Ես կարող եմ հաղթել կամ պարտվել, բայց ինձ համար շատ կարեւոր է իմանալ, թե ում հետ եմ գնում այդ ճանապարհը:

- Մի քանի ամիս առաջ, եթե չեմ սխալվում, հենց Պորտուգալիայի խաղից հետո հայտարարեցիք, որ բանակցում եք Հենրիխ Մխիթարյանի հետ՝ նրան ազգային հավաքական վերադարձնելու նպատակով: Այսօր ի՞նչ փուլում է այդ գործընթացը:

- Բոլորի հետ եմ բանակցել, բոլորի հետ խոսել եմ: Բայց նորից եմ ասում՝ չեմ ուզում անուններ տալ: Այդ բոլոր ֆուտբոլիստների մասով էլ ունեմ որոշակի հիասթափություն:

- Մխիթարյանի մասի՞ն էլ եք խոսում:

- Մխիթարյանը լեգենդար տղա է, հերոս ֆուտբոլիստ, որը ներկայացնում է մեր ազգը: Ես չեմ ուզում որեւէ բան ասել նրա հասցեին: Բայց որպես գլխավոր մարզիչ՝ լինի Մխիթարյանը, Բարսեղյանը կամ ով ուզում է լինի, եթե ես նրան չեմ տեսնում ազգային հավաքականում, այլ տեսնում եմ ակումբում խաղալիս, բնական է, որ որպես գլխավոր մարզիչ որոշակի հիասթափություն ունեմ: Բայց ես չեմ ուզում որեւէ մեկին մեղադրել: Դա նրանց իրավունքն է: Ես չեմ ուզում պարտադրել կամ մեղադրել: Հիասթափություն, այո՛, ինչո՞ւ ոչ: Բայց ես այսօր գիտեմ հավաքականի վիճակը եւ այն դժվար ժամանակահատվածը, որի միջով անցնում ենք: Եթե որեւէ մեկը հնարավորություն ունի օգնելու ազգային հավաքականին, պետք է օգնի: Ես ինքս էլ, երբ ֆուտբոլիստ էի, ունեցել եմ տարբեր կոնֆլիկտներ, այդ թվում՝ ֆեդերացիայի հետ: Մեկից ավելի դեպք է եղել: Բայց երբ խոսքը գալիս էր ազգային հավաքականին, ես միշտ ասել եմ՝ ինձ համար այն վեր է ամեն ինչից:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԿՆԵՐԿԱՅԱՆԱ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 25-ից 27-ը Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք Armenian Auto Show-ի այցելուները մեքենա ընտրելու եւ ձեռք բերելու հնարավորություն կունենան հենց ցուցահանդեսի ընթացքում:

Ամերիաբանկը էքսպոյին կներկայացնի իր MyCar.am հարթակը եւ գործընկեր ավտոդիլերների հետ մշակված հատուկ առաջարկները, որոնց շրջանակում այցելուները երեք օր շարունակ կկարողանան գտնել իրենց նախընտրած մեքենան եւ ձեռք բերել այն՝ առանց կանխավճարի:

MyCar.am-ում ներկայացված են ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային շուկայի առաջատար ավտոդիլերների առաջարկները: Այս պահին հարթակում հասանելի են ավելի քան 80 ավտոդիլերի առաջարկներ, որոնցից շուրջ 30-ը՝ պաշտոնական ներկայացուցիչներ:

Հարթակի միջոցով մեքենա ընտրելու գործընթացը հնարավորինս պարզեցված է՝ հաշվիչների, զտիչների եւ մեքենաների համեմատման գործիքների շնորհիվ: Դրանք հնարավորություն են տալիս սահմանել ընտրության շրջանակը, համեմատել տարբեր մեքենաների առաջարկներն ու արժեքը եւ կողմնորոշվել գին-որակ հարաբերակցության մեջ՝ խնայելով ժամանակն ու հեշտացնելով վերջնական որոշում կայացնելու ընթացքը:

MyCar.am-ը զարգանում է նաեւ որպես մեքենաների վաճառքի հարթակ անհատների համար. այսօր յուրաքանչյուրը կարող է իր մեքենան վաճառել հարթակում՝ գրանցվելով եւ տեղադրելով համապատասխան հայտարարությունը:

Նշենք, որ ավտովարկերի պորտֆելի ծավալով Ամերիաբանկը շարունակում է պահպանել ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարի դիրքը՝ շուկայի շուրջ 41% մասնաբաժնով (30.06.2026թ. դրությամբ):

Հատկանշական է, որ 2026 թվականի առաջին ութ ամիսներին Ամերիաբանկի ավտովարկերի ավելի քան 43%-ը տրամադրվել է առցանց՝ MyCar.am հարթակի միջոցով: Նույն ժամանակահատվածում, տարեվերջի համեմատ, բանկի ավտովարկերի պորտֆելն աճել է մոտ 40%-ով:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ամերիաբանկը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը: Թվային փոխակերպման ռազմավարության ներքո բանկը շարունակաբար ներդնում եւ կատարելագործում է նորարարական պրոդուկտներ, ծառայություններ եւ հարթակներ, որոնք միտված են բավարարելու մարդկանց ֆինանսական եւ ոչ ֆինանսական կարիքները: Ամերիաբանկը, որպես դինամիկ զարգացող ֆինթեք միջավայր, առաջարկում է կյանքի որակը բարելավող ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՎԵՐԱԴԱՐՁ

ՈՍԿԵ ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ

Արգենտինայի Ռոսարիո քաղաքում ընթացող «Սանտա Ֆե-2026» Հարավամերիկյան խաղերում հունահռոմեական ոճի ըմբշամարտի մրցաշարն առանձնացավ պատմական իրադարձությամբ: 39-ամյա հայտնի հայ ըմբիշ, աշխարհի չեմպիոն եւ Լոնդոնի Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Արսեն Ջուլֆալակյանը, ներկայացնելով Արգենտինան, ոսկե մեդալ նվաճեց մինչեւ 77 կգ քաշային կարգում, գրում է armsport-ը: Եզրափակիչ գոտեմարտում Ջուլֆալակյանը 4-2 հաշվով տպավորիչ հաղթանակ տարավ կոլումբիացի Խաիր Կուերոյի նկատմամբ՝ ռեւանշի հասնելով խմբային փուլում նրանից կրած պարտության դիմաց: Այս մեդալը պատմական նշանակություն ուներ Արգենտինայի համար. երկիրը վերջին 16 տարիների ընթացքում Հարավամերիկյան խաղերում հունահռոմեական ըմբշամարտի ոսկե մեդալ չէր նվաճել:

«Արգենտինայի այս երկարամյա դադարն ինձ համար հսկայական մոտիվացիա էր՝ հաղթելու եւ ինձ, եւ երկրի համար: Անհավատալի զգացողություն էր»,- նշել է հայ ըմբիշը մրցաշարից հետո:

Արսեն Ջուլֆալակյանի անունը հայկական սպորտում վաղուց արդեն ոսկե տառերով է գրված: Ծնվելով 1987 թվականին Գյումրիում՝ 1988-ի Սեուլի Օլիմպիական խաղերի չեմպիոն Լեւոն Ջուլֆալակյանի ընտանիքում, Արսենը կարողացավ կերտել սեփական փառահեղ ուղին: 2009-ին նա դարձավ Եվրոպայի, իսկ 2014-ին՝ աշխարհի չեմպիոն, սակայն նրա կարիերայում շրջադարձային եղավ 2012-ի Լոնդոնի Օլիմպիական խաղերի արծաթե մեդալը:

Թվում էր, թե 2021 թվականի հուլիսին, «Տոկիո-2020»-ի ուղեգրի համար պայքարում հավաքականի ներսում տեղի ունեցած վիճահարույց որոշումներից եւ քաղաքականություն մուտք գործելուց հետո, նրա սպորտային կարիերան ավարտված է: Սակայն 2023 թվականին Շվեյցարիայում կայացած հանդիպումը արգենտինացի նախկին օլիմպիական ըմբիշ, ներկայումս Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի պաշտոնյա Յուրի Մայերի հետ, փոխեց ամեն ինչ: «Չե՞ս ցանկանում քո չորրորդ Օլիմպիական խաղերում ներկայացնել Արգենտինան»,- Մայերի այս անսպասելի առաջարկը վերածնեց Ջուլֆալակյանի սպորտային կիրքը:

Վերադարձը հեշտ չէր: Ջուլֆալակյանը պատրաստվում էր հանդես գալ «Փարիզ-2024»-ում, սակայն ծանր վնասվածքի պատճառով ստիպված եղավ մեկ տարի տրամադրել վերականգնմանը: Չցանկանալով սպորտից հեռանալ վնասվածքի պատճառով՝ նա շարունակեց պայքարը եւ արդեն 2025 թվականին Մոնտերեյում կայացած Համաամերիկյան առաջնությունում նվաճեց արծաթե մեդալ:

Ռոսարիոյում կայացած Հարավամերիկյան խաղերի այս ոսկին ամրապնդեց նրա դիրքերը նոր հավաքականում: Տեղի երկրպագուները հայ չեմպիոնին ընդունեցին որպես յուրայինի, իսկ ինքը՝ Ջուլֆալակյանը, արդեն նախանշել է հաջորդ գլխավոր նպատակը: Չնայած 39 տարեկան հասակին՝ փորձառու ըմբիշը հայտարարել է, որ մտադիր է պայքարել 2028 թվականի Լոս Անջելեսի Օլիմպիական խաղերի ուղեգրի համար՝ կրկին Արգենտինայի դրոշի ներքո:

● *Խամաճիկների պետական թատրոնում սեպտեմբերի 27-ին՝ ժամը 12:30-ին, կկայանա «Հենզելն ու Գրետելը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հանրապետության նախագահը ո՞ր դեպքերում եւ ի՞նչ կարգով է պարգեւատրում շքանշաններով եւ մեդալներով, շնորհում պատվավոր կոչումներ:

Մովսես Կարապետյան, 49 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքի 5.3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական պարգեւներ եւ պատվավոր կոչումներ Հանրապետության նախագահը շնորհում է վարչապետի, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի եւ Բարձրագույն դատական խորհրդի նախագահների առաջարկությունների հիման վրա՝ եռօրյա ժամկետում:Հայաստանի Հանրապետության պետական պարգեւով պարգեւատրելու եւ պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ միջնորդությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը կարող է պետական պարգեւով պարգեւատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագրի նախագիծն իր առարկություններով վերադարձնել միջնորդությամբ դիմող մարմին: Այն դեպքում, երբ միջնորդությամբ դիմող մարմինը չի ընդունում Հանրապետության նախագահիի առարկությունը, ապա Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում ստորագրում է պետական պարգեւով պարգեւատրեու կամ պատվավոր կոչում շնորհելու վերաբերյալ Հանրապետության նախագահի հրամանագիրը կամ եռօրյա ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ համաձայն՝ բարձրագույն դասային աստիճաններ Հանրապետության նախագահը շնորհում է վարչապետի, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի եւ Բարձրագույն դատական խորհրդի նախագահների առաջարկությունների հիման վրա՝ եռօրյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞ր իրավական ակտերով է ապահովվում քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գործընթացը:

Գարեգին Գրիգորյան, 57 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գործընթացը եւ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների կիրարկումն ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հետեւյալ որոշումներով՝

1. ՀՀ Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» N 2106-Ն որոշում:
2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի «Քաղաքաշինության գործունեության սուբյեկտների լիցենզիաների դասակարգման եւ պատասխանատու մասնագետների հավաստագրման անցումային կարգը հաստատելու մասին » N 15-Ն հրաման:
3. ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող աշխատանքների եւ ծառայությունների ցանկը հաստատելու մասին» N1615-Ն որոշում:
4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը եւ մասնակցությանը ներկայացվող պահանջները եւ շարունակական մասնագիտական զարգացման յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող կրեդիտների քանակը եւ դրանց շնորհման չափորոշիչները հաստատելու մասին» N 06-Ն հրաման:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Գարշահոտ, հակասանիտարական վիճակ եւ համաճարակի վտանգ Աբովյանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 6 + 11 + 23 + 28
	Կոտայքի լեռներ	+ 7 + 11 + 23 + 27
	Կոտայքի նախալեռներ	+ 14 + 16 + 29 + 31
	Գեղարքունիք	+ 7 + 12 + 21 + 26
	Լոռի	+ 8 + 13 + 23 + 27
	Տավուշ	+ 10 + 13 + 24 + 27
	Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 + 23 + 26
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 18 + 28 + 32

	Արարատ	+ 14 + 18 + 29 + 33
	Արմավիր	+ 12 + 17 + 31 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 11 + 25 + 28
	Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 17 + 31 + 34
	Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 22 + 25
	Սյունիքի նախալեռներ	+ 9 + 13 + 26 + 30
	Սյունիքի հովիտներ	+ 16 + 20 + 32 + 35
	Երեւան	+ 16 + 18 + 31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*